


ԽԱՂԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
Պ Ր Ո Ց Ե Ս Ո Ւ Մ



ԼՈՒՍԴՐԱՑ

ՑԵՐԵՎԱՆ

1940

371

Խ - 19

ԽԱՂԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՊՐՈՑԵՍՈՒՄ

Տօն

ՁԲ

1 MAR 2010

16.05.2013

43.443

ԽԱՂԵՐԸ ՑԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ԴՐՈՌԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Խաղերը հանդիսանալով Փիզիկական դաստիարակության ամենաարժեքավոր ձեերից մեկը՝ մեծ տեղ էն գրավում դպրոցական մանկավարժական պրոցեսում։ Կազմակերպված խաղերն անհրաժեշտ, առողջապահիկ (հիգիենիկ) պայմաններում, թարմ ողում կամ լավ ողափոխած շենքում բարձրացնում են նյութերի փոխանակությունը, ուժեղացնում են սրտի գործունեյությունն ու չնչառությունը, այսինքն՝ նպաստում են որգանիզմի ընդհանուր ամրապնդմանը։

Խաղերը ծառայում են նաև յերեխաների եմոցիոնալ սֆերայի զարգացմանը։

Խաղը հարստացնում է յերեխային նոր պատկերացումներով, տրամադրում է դիտողականության և ասոցիացիաների։ Խաղի միջազգով դաստիարակվում են սեփական շարժումներին տիրապետելու և մեկ դորձողությունից արագ կերպով մյուսին անցնելու կարողություն (փախչողից գառնում և հետապնդող և այլն)։ Յերեխային արվում է հնարավորություն՝ ստեղծված դրությունից դուրս դալու ամենալավագույն յերեխ գտնելու—վազմում և արդյոք առաջնին հասնելու համար («Հասիր» խաղում), արդյոք դընդաղ և դշում («Կենդանի նպատակետ»), պաշտ-



1869

40

պանում և արդյոք նալատակը ռակետիայով («Ֆը-  
րանսիական լավտա»), — այս բոլոր գեղքերում նա  
պետք է յերեվան ըերի ճարպկություն և արտգու-  
թյուն։ Այս բոլորը նրան միանդամից չի հաջողվում։  
Այդ արդյունքները ձեռք են բերվում խաղը կրկնե-  
լով, դատելու կարողության զարգացման, հակառա-  
կորդի զրության զնահատման, հարձակման կամ  
պաշտպանման ձերի ընտրության ճանապարհով։  
Խաղում պահանջվում է ուշադրություն, ակտիվ դի-  
տողականություն, քանի վոր յերշեմն ամենափրեթիկ  
անդդուշությունն անդամ իր յետից խաղացողի հա-  
մար բերում և անհաջողություն, իսկ խմբական խա-  
ղերի ժամանակ՝ և ամբողջ խմբի անհաջողություն։

Կարենը և Ընդդեմ, վոր այդ գիտակցական աշ-  
խատանքը խաղի ընթացքում կապված և չթուլա-  
ցող հետաքրքրության և բավականության հետ։ Խա-  
ղի մեջ կան կամքը զարգացնելուն նպաստող տարրեր։  
Խաղերը նպաստում են այնպիսի հատկությունների  
մշակման, ինչպես հաստատակամությանը, համար-  
ձակությանը և այլն։ Խաղերը հատկապես արժեքա-  
վոր են յերեխաների մեջ վարքի կոլեկտիվ ունակու-  
թյուններ զարգացնելու և կարգավահություն դաս-  
տիարակելու տեսակետից։

Պ. Ֆ. Լեսպաֆոն իր ժամանակին հատկապես  
ընդդեմ և խաղի այս նշանակությունը դպրոցական-  
ների համար։ «... յուրաքանչյուր դպրոցական խա-  
ղում յերեխաները, վորքիկ հասարակության այդ  
անդամները, վոր ակտիվ կերպով մասնակցում են  
խաղի մեջ, մոռանում են իրենց անհատական, եղու-

խտական նալատակները և զբաղվում են բացառադիմ  
ընդհանուր խնդիրներ իրավաբանական ձգումով,  
ընդումին պահպաններով այն ընդունված կանոններն  
ու որենքները, վորոնք ուղղված են յուրաքանչյուր  
առանձին անհատի իրավունքները պաշտպանելուն։  
(թույլ չտալով խաղի որենքներն ու կանոնները խախ-  
տելու)։

Խաղեր կան, վարտեզ մասնակցուները զրված են  
աշխատակցության պայմաններում կամ ընկերական  
սժանդակության պայմաններում (ինչպես որինակ՝  
«Փերությունից աղատել» խաղում)։

Խաղի մեջ կատարելով զեկավարների, դատավո-  
րի ողնականների, թիմերի կապիտանների և գատո-  
մորների գեր, յերեխաների մեջ մշակվում ե կարդա-  
պահություն, իրեն և ուրիշներին զնահատելու որ-  
յեկատիվություն, ինչպես և պատասխանատվություն  
ու պարտքի գիտակցում։

Դպրոցականի դաստիարակության դործում ճիշտ  
կազմակերպված խաղի նշանակությունը ֆոկայական  
է։ Բայց շատ մեծ սխալ կլիներ մտածել, թե այս  
բոլորը կատարվում ե ինքն իրեն—առանց դասավիկի  
մասնակցության։ Շարժական խաղերի բարերար աղ-  
ղեցությունը հնարավոր և միայն պարագմունքների  
ճիշտ անցկացման, ուշադիր ուսումնասիրության,  
ուսուցչի կողմից զեպի յուրաքանչյուր տակերտ բզ-  
դայուն վերաբերմունքի և յերեխաների Փիզիկական

1) Պ. Ֆ. Լեսպաֆոն—Զեսնարկ դպրոցական հա-  
ստիկի յերեխաների Փեղ. դաստ. 1908 թ. հրատ.։

դաստիարակության համար շարժական խաղերի նը-  
շանակության ճիշտ ըմբռնման պայմաններում:

Խաղերը յերեխն կարելի յե ոգտագործել անցած  
նյութի հաշվառման նպատակով: Դրա համար ան-  
հրաժեշտ ե ընտրել կամ կազմել այնպիսի խաղ, վորը  
տարբեր պայմանների համակցության միջոցով, հե-  
տաքրքիր իրադրության մեջ ողնի բացահայտելու  
յերեխաների ձեռք բերած սպորտային-տեխնիկական  
հմտությունների աստիճանը, այնպիսի հատկու-  
թյունների տիրապետման աստիճանը, վորպիսիներն  
են՝ արագությունը; Կողմնորոշումը, ինչպես և կազ-  
մակերպչական հմտությունների առկայությունը:  
Յեթե զրա հետ մեկտեղ, համապատասխան ձևով մը-  
տածված և կազմակերպված լինի նաև դատավարու-  
թյունը և հաշվառումը, ապա այդպիսի խաղը, վորո-  
շակի սահմաններում կարող ե տալ ցուցանիշներ, թե  
վորքանո՞վ ե յուրացված ծրագրը և վորտե՞ղ ե թե-  
րակատարված այն: Սակայն չպետք ե այստեղից  
յեզրակացնել, վոր սոսուզման այսպիսի յեղանակը  
կարող ե փոխարինել Փիզիկուլտուրայի գծով դպրոց-  
ներում ընդունված հաշվառման ձեին: Դա կարող է  
միայն լրացնել խկական հաշվառումը—վորպես ու-  
սուցչի խորացված աշխատանքի կամ դասավանդման  
մեթոդիկայի բարելավման մի ձև:

Ի վերջո, հիմնվելով վերեւում ասածների վրա,  
կարելի յե անել հետեւյալ ընդհանրացումը. խաղը  
Հանդիսանալով Փիզիկական դաստիարակության մի-  
ջոցներից մեկը՝ նպաստում ե դպրոցականի հոգե-  
Փիզիկական հատկությունների առողջապահման ու

զարգացմանը, կոլեկտիվիստական ունակությունների  
կազմակերպմանն ու զարգացմանը, ինչպես և ուսուց-  
չի համար կարող ե հանդիսանալ դասարանն ամբող-  
ջությամբ, ինչպես և առանձին աշակերտներին ու-  
սումնասիրելու և ճանաշելու միջոցներից — ձեերից  
մեկը:

## ԽԱՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ (классификация)

Դպրոցում ուսագործվող խաղերը կարելի յե  
րաժանել հետեւյալ յենթախմբերի՝ շարժական խաղեր  
(վոչ սպորտային), սպորտային և ռազմականացրած  
խաղեր:

Ի հարկե, սա արհեստական բաժանում է, բայց  
այդ բաժանումը հնարավորություն ե տալիս ավելի  
ճիշտ կողմնորոշվել դպրոցական պարագմունքների  
համար խաղեր ընտրելիս:

ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ (վոչ սպորտային) սպոր-  
տային կազմակերպությունների կողմից հաստատ-  
ված կանոններ չունեն, նրանց մեջ չկա մասնակիցնե-  
րի հաստատուն քանակ (կարող ե միաժամանակ  
մասնակցել վողջ դասարանը): Դաստառուն նույնիսկ  
խաղի ընթացքում կարող ե փոփոխել և լրացնել  
խաղի կանոնները:

Այս խմբին պատկանող խաղերից վորոշ չափով  
տարբերվում են այն խաղերը, վորոնք կապված են  
յերաժշտության հետ, կամ ինչպես համախ նրանց  
անվանում են՝ «ոլիթմիկ խաղեր», վորոնք նպատակ  
ունեն զարգացնել լսողությունը, ոիթմը, դործողու-

թյան արագությունը և այլ արժեքավոր հատկություններ:

Շարժական խաղերը զբայլում են կենտրոնական տեղ նախադպրոցական հասակի յերեխաների հետ տարվող աշխատանքում, ինչպէս և լայն կերպով կիրառվում են տարբական և միջնակարգ դպրոցների յերեխաների հետ տարվող պարագմունքներում: Որիթմիկ խաղերը կիրառվում են նախադպրոցական չիմսարկների աշխատանքներում, իսկ զոլոցում դըրանք շատ քիչ են տարածված այն պատճառով, վոր ֆիզկուլտուրայի դասառուները կամ թերազնահատում են նրանց նշանակությունը, կամ չեն իմանում այդ խաղերի բավանդակությունն ու մեթոդիկան: Դըրոցականների Փեղիկական դաստիարակության ընդհանուր սիստեմում այս խաղերի ողբարձումը շատ շատ կալի յէ:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ նպատակ ունեն մաքսիմալ կերպով յերեվան բերել ձարսկությունը, ուժն ու դիմացկունությունը և պահանջում են անհրաժեշտ չափի պատրաստականություն ու հմտություններ: Սպորտային խաղերում զոյտություն ունեն հաստատված կանոններ, խաղացողների վորոշակի կաղմ և մասնակցողների մեջ դերերի բաշխում (պաշտպանություն, հարձակում և այլն): Սպորտային խաղերի մեծամասնության մեջ յուրաքանչյուր խաղացող վարժվում ե մեկ դերում, ձգտելով այդ ուղղությունը կատարելազորդվել և մաքսիմալ առաջադիմության հասնել: Խաղացողները հատկապես սովորում են տեխնիկական պրիորներ, վարժվում են

խաղերի առանձին տարրերի մեջ (զնդակի ձգելը կողմանի մեջ), անսականորեն և պրակտիկ կերպով ուսումնասիրում են խաղի տակտիկան, կատարելազորձվում են նրանում, ձգտելով տեխնիկան հասցնել վարպետության: Մրցումն ու արդյունքների ձևոք ընթացումը խաղի սովորությունը մոմենտներն են զանոնում: Սպորտային խաղերը պիխավորապես կիրառվում են միջնակարգ դպրոցի Փիզիուրա աշխատանքներում:

ԾԱԾԿԱՆԱՅՆ ԽԱՂԵՐԸ մեծ մասամբ կազմած են վայրի (անցի) հետ և սովորաբար անց են կացվում զրոսանքների և եքսկուրսիաների ժամանակ: Այս տեսակ խաղերի բնորսչ առանձնահատկությունն այն է, վոր նրանց մեջ կան հանկարծակի հարձակման, զինակալուման, միհասելու մոմենտներ, ինչպես և մրցում: Դրանց կատարման համար հարկավոր են. պարզուց կազմակերպվածություն և մասնակիցների անհրաժեշտ պատրաստություն, ինչպես ուղղագործադպրական հմտությունների (սողում, լող և այլն) տիրապետման մեջ, այնպես ել վարքի վորակի մեջ (կարողանալ յենթարկվել, կարողադրություններ անել, ամենայն ճշգրտությամբ կատարել համանակարգությունը), վորը սրահանջում և մասնակիցների կողմից մեծ կարգապահություն, աչքարտություն և նախաձեռնություն:

Այս խաղերը հարմար են զիխավորապես միջնակարգ դպրոցի համար. աչքի ընկնող տեղ են գրավում նրանք սիրոներական համբարում:

Բազմականացրած խաղերը կարող են լինել վոր-

սորդության ձևով, հետապնդման, հարձակման սարքերով, ռազմական գործողությունների ձևով—տակտիկական առաջադրանքներով։

Հանձնարարության հնք դպրոցական աշխատանքների համար հենվել շարժական խաղերի հետեւյալ կլասի-ֆիկացիայի վրա։

- 1) ՄԻԱՅՆԱԿ ԽԱՂԵԲ (վոչ կամանդային),
- 2) ԿԻՍՍԹԻՄԱՅԻՆ ԽԱՂԵԲ, 3) ԹԻՄԱՅԻՆ ԽԱՂԵԲ։

Յենելով յերեխաների բազմակողմանի պատրաստության խնդիրներից՝ անհրաժեշտ է վերոհիշյալ խմբերից յուրաքանչյուրը ստորաբաժանել աարրեր Փիզիկական վարժություններ բովանդակող խաղերի խաղեր վաղքով, նետումով, ցատկումներով և այլն։

Կանոնադրություններից յուրաքանչյուրը բնորոշ առանձնահատկությունների վրա։

Առաջին խմբին (անհատական) պատկանող խողերը բնորոշ են նրանով, վոր խաղացողներից յուրաքանչյուրն ինքնուրույնարար խաղում և այնպես, ինչպես կարող են, հիմնական ուշադրությունը խաղի մեջ միայն գլխավոր գործող անձին դարձնելով (ինչպես որինակ՝ «Գայլը», «Խփոցի»—«Մրոտի»—(ԱՐ-ՆԱՊԿԱ) խաղերում), վորպեսզի վերջինս նրան չբնի կամ չխիի։

Այս խմբի մեջ կարելի յե մտցնել իմիտացիոն խաղերը (նմանողության տարրերով). վորպես որինակ կարելի յե վերցնել «Արջի մոտ—անտառում» խաղը, վաղե-վաղը պարունակող խաղերը (արց-պերե-ճայկա) վորոնք բնորոշ են նրանով, վոր յերեխաներն ամբողջ խմբով փախչում են մի քաղաքից (վայրից)

մշուսը, իսկ հանապարհին վորեն մեկը նրանց իրավում է. վորպես որինակ կարող են ծառայել «Գայլը փոսում» խաղը, «Խփոցի» (մրոտի) տիպի խաղերը, վորոնք բնորոշ են դերերի արաւությունով և այլն։

Պարզ են, վոր խաղերի միենույն խմբում կարող են մինել տարբեր բարդության խաղեր. այսպես ոքինակ՝ «Վորսորդներն ու նապաստակները» խաղն ավելի բարդ է, քան «Գայլը փոսում»։ Այս կամ այն դասարանի համար խաղեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ հանդամանքը։

Ցերկուրդ խմբին (կիսաթիմային) պատկանող խաղերը բնորոշ են նրանով, վոր նրանց մեջ շահագրգուպածություն կայերկու կողմերի մեջ, վորոնք անհավասար են խաղացողների քանակով, հետեւաբար և դանվում են վոչ հավասար պայմաններում։ Նրանց մեջ բավարար կանոններ կան, ինչպես և ամբողջ խըմբի միտամանակյա զործողությունները բաղմազն են, ըստ վորում կողմերից յուրաքանչյուրի վործությունները պետք է համաձայնեցված լինեն։

Այս խաղերի մեջ ինքնազործունեյության ավելի շայն ասպարեզ կա խաղացողների համար, քան միահնակ խաղերում։ Վորպես որինակ կարող են ծառայել «Վորսվող պնդակը», «Արծիվը և արծվաճուտը» խաղերը։

ԹԻՄԱՅԻՆ խաղերը բնորոշ են յերկու հավասար մրցող կողմերի առկայությամբ, վորոնք զրվում են հավասար պայմաններում և համահավասար կերպով շահագրգուված են խաղը տանելու մեջ։ Թիմային խա-

զերը կարող են տարբեր բարդության լինել։ Դրանցից կարելի յէ թվել «Եստաֆիկաները», վորոնց մեջ մեծ մասամբ խաղացողների խնդիրն և վորոշ չափի մրցակցությունը հանձնարարված չարժումների ճիշտ և արագ կատարման մեջ (որինակ՝ հաղթահարել մեր չարք արգելքներ — խոչնդումներ և արագ կերպով վերադառնալ իր տեղը)։ Յուրաքանչյուրը հանդես և բերում իր արագածարժությունը և կարողությունը վորոշ չարժումներում, թույլերն ու ուժեղները գանգում են միենույն պայմաններում։ Վորսեսորինակ կարող ե ծառայել «Բանջարեղենների ցանելը» խաղը։ Միաժամանակ դործում են յերկու, չորս խաղացողներ, վոչ ավելի։ «Լապտա» խաղը նույնպես կարելի յէ համարել թիմային խաղ, բայց նա չառավելի բարդ և «Եստաֆիկաց»։ Երա մեջ ավելի բարդ ե կաղմակերպությունը, խաղացողների գասավորվածությունը, ավելի բարձարան և չահարդարված կողմերի և անհատ խաղացողների հակալբությունը, զրուհետ ել հապլած՝ ավելի հետաքրքիր և խաղի տակտիկան և ավելի մեծ պահանջներ են առաջադրվում վորակի հայտարկման խնդրում։ Վերջապես այսուհետ հնարավոր և ուժերի դիմերենցիան։ Վերսկա ու ըրինակ կարող ե ծառայել «Ամերիկական լապտա» խաղը։

Թիմային այս խմբի խաղերին են պատկանում «Անցման» («Պերեպաօ») տիպի խաղերը, վարտուղարացողներին առաջարկվում ե կրնկրետ խնդիրը՝ որինակ՝ վորքան կարելի յէ արագ կերպով անցնել դաշտի մեջով, հաղթահարելով ձանալարհին յեղած խո-

չընդուները։ Սատ վորում խաղացողներին լայն նախաձեռնություն և տրվում գործողության պլան մշակելու և այն կենսագործելու համար։

Նման խաղերը հնարավորություն են տալիս գըր սեղուել ամբողջ խմբի կաղմակերպվածությունը, կարգապահությունը, յուրաքանչյուր խաղացողի պարտականությունը, նախաձեռնությունը։

Խաղերի այս նույն խմբում (թիմային խաղեր) կան ավելի բարդ տակտիկա ունեցող խաղեր, վորտակեղ հանդես և զալիս յուրաքանչյուր խաղացողի վորոշ չափի մասնագիտացումը։ Այդպիսի խաղի որինակ կարող ե ծառայել «Գնդակը կապիտանին» խաղը։

Վերոհիշյալ պայմանական խմբավորումը և խաղերի համապատասխան բնութագրումը զյուրացնում և նրանց բաշխումը՝ պարոցականների տարիքային առանձնահատկությունների համաձայն։

Միայնակ խաղերը հետաքրքիր և ավելի համապատասխան կլինեն տարբական զպլացի յերեխանների համար, բայց նրանցից ավելի բարեկրի սպոտործությունը կարելի յէ նաև միջնակարդ զպլացում։

1-ին և 2-րդ զասարանների ավելի սիրած խաղերն իմիտացիոն խաղերն են և «Անցման» տիպի խաղերը։ Աստիճանաբար բարձրանում են խաղերի բարդացման վերաբերյալ պահանջները։ 4-րդ զասարանից սկսած կարելի յէ մոցնել կիսաթիմային և թիմային խաղերը, վորոնց կանոնները բարդ չեն։

Միջնակարգ զպլացի 5-րդ և 6-րդ զասարաններում դիմերենցիությունը յին թիմային խաղերը սրանց հետ միասին լինելու յին նաև, սպորտային խաղեր։

Միջնակարգ զպլոցի մյուս դասարաններում չը-  
պետք է մոռանալ առաջադրանքներ ունեցող թիմային  
(«անցման» տիպի) խաղերի արժեքը, վրա համար ել,  
սպորտային խաղերի հետ մեկտեղ պետք է տալ նաև  
շարժական խաղեր, վորոնք պրակտիկայում հաճախ  
թերապնահատվում են:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ ԽԱՂԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Յերեխաները շատ են սիրում շարժական խաղեր,  
նրանք շատ հաճախ ինքնուրույնաբար այդպիսի  
խաղեր են կազմակերպում դասամիջոցներին, զբո-  
սանքների ժամանակի: Նույնիսկ ֆիզվուլու դասի ժա-  
մանակ կարելի յե թույլ տալ յերեխաներին ինքնու-  
րույնաբար խաղեր կազմակերպել դասատվի հոկողու-  
թյամբ: Կրթադաստիարակչական տեսակետից, այնու-  
ամենայնիվ առաջնությունը տրվում է դասառուների  
կողմից կազմակերպված խաղերին: Դրա առավելու-  
թյունը նրանումն է, վոր դասատուն առաջադրելով  
վորոշակի խնդիրներ, անհրաժեշտ կերպով ընտրելով  
խաղի նյութը և ձիւտ կերպով կազմակերպելով խա-  
ղերը, դրանց ողնությամբ կարող եներգործել աշա-  
կերտների որդանիզմի այս կամ այն կողմի վրա:

Յերկրորդական չպետք է համարել, թե յե՞րբ,  
ի՞նչ հաջորդականությամբ կամ ինչպիսի խաղեր պետք  
է տրվեն յերեխաներին:

Յերեխաներին գիտելիքներով լավագույն կերպով

հաբստացնելու ունակությունների ամրացման և կա-  
ռապելավործման համար կարեոր և խաղերի նյութը  
ուղարկությունը, դրա համար ամենայն  
ինամքով ու մտածված ընտրելով անհրաժեշտ խա-  
ղերը:

Յերեխաների հետ զբաղվելու խաղեր ընտրելիս՝  
անհրաժեշտ և պահպանել հետեւյալ հիմնական պա-  
հանջները:

Կազմերը պետք է համապատասխանեն դպրոցի ու-  
սումնառ-դաստիարակչական նպատակներին, այլ խոս-  
քով ասած, խաղի բազմազան նյութերից, կարեոր և  
ընարել այնպիսի խաղեր, վորոնք յուրաքանչյուր դա-  
սարանի համար համապատասխանելին յերեխայի բաղ-  
մակողմանի զարգացմանը:

Կազմերն իրենց կանոնների բարդությամբ, դոր-  
ձովաթյունների ծավալման աստիճանով ու սպաս-  
վագ արգյունքով պետք է յուրաքանչյուր տարիքին  
մասաչելի լինեն, ինչպես նաև համապատասխան լի-  
նեն աշակերտների հետաքրքրությանը:

Համակերպվել յերեխաների հետաքրքրությանը,  
դա չի նշանակում ընտրել նրանց համար միայն հե-  
տաքրքր և զվարձություն պատճառող (Յանձնական հաղերը:

Յուրաքանչյուր տարիքի համար խաղեր ընտրելիս  
անհրաժեշտ և հիշել խաղերի՝ հետեւյականորեն և  
սոտիճանարար հետոից ալելի բարդին անցնելու հան-  
դամանքը, ինչպես հատկությունների և հմտություն-  
ների զարգացման, այնպես ել յերեխաների վրա այդ  
խաղերի Փիզիոլոգիական ներզործության խմասով:

Հաճախ դասատուները՝ մատնացույց են, անում, վոր այս կամ այն խաղը ինչպես որինակ՝ «Յերբորդ ավելորդ»-ը վատ և անցնում 1-ին դասարանի յերեխաների մոտ— դա միանդամայն հասկանալի յէ: Հիշած խաղը բնորոշ և նրանով, վոր այդտեղ խաղացողից պահանջվում և արագ կերպով մի դրությունից անցնել մի այլ դրության: 1-ին դասարանի աշակերտները չեն տիրապետում մեծ արագաշարժության և շարժումների համապատասխան արագության, դրա համար ել այդ խաղը դժվար է, ուստի և անհետաքրքիր:

Յերեխայի տարիքային առանձնահատկությանը ըստ համապատասխանող խաղերից մի ավելի բնորոշ որինակ բերենք պրակտիկայից: Անց և կացվում թիմային խաղ, եստաֆետայի տիպի, տարբական զբոցի 2-րդ դասարանում: միաժամանակ դուրս են վաղում մեկական հոգի յուրաքանչյուր կամանդայից զեպի պայմանավորված տեղը, վերցնում են զնդակները և հետ վազելով հանձնում են մյուսներին: Կամանդաները կանգնած են անկանոն կերպով, խաղացողների մեջ եւ չկա այնքան համբերություն և զսպվածություն, մինչև վոր 15—17 դույժը (ամբողջ դասարանը) կկատարեն այդ նույնը: Մի քանիսը ջղայնացած հրում են վաղողներին, հատկապես ավելի վոչ ձկուններին, վոչ արագաշարժներին: դուրս են վաղում ժամանակակից առաջ, և վերջապես, յերբ վաղում է վերջին դույժը, կարդապահությունը խախտվում է: Զապատելով՝ խաղը վերջացած հայտարարելուն, յէւ

րեխաների մի մասն սկսում է վիճաբանել այն մասն, թե ով է հաղթել, իսկ յեթե հանկարծ կապազիփի, վոր կամանդներից մեկում մի հոգի ավելի յէ յեղել, ապա աղմուկն ու վիճաբանությունները չեն դադարում նույնիսկ զանդից հետո: գրպավածության արձականքները լսվում են դասամիջոցներին, անզամ հաջորդ դասին:

Այս բոլորն ինչից պատահեց: Պատճառը պարզ է: խաղը չի արված ըստ տարիքի: 2-րդ դասարանի յերեխաները դեռևս չունեն այն զարգվածությունը, վորպէսին պահանջում է տվյալ խաղը: դեռևս չկանակ արագ և թիթե կերպով վազելու ունակությունն չկա անհրաժեշտ սկառասխանավություն վողջ կամանդայի համար: դեռևս ձեռք չեն բերված սեփական զործողություններն ու մյուսների զործողություններն որյեկտիվորեն զնահատելու կարողություն: վորպես խաղի արգյունք հանդես է դալիս զերպրզուվածություն՝ ցանկանալով առանց կանոնները պահպանելու, ինչ կերպ ել լինի, հաղթանակ ձեռք բերել՝ առաջ և զալիս նաև զժողություն և բարկություն ավելի թույլ խաղացողների և դաստավորի հասցեյին, բավարարված չեն լինում խաղից:

Բերգած որինակները բավական են ըմբռնելու համար, թե վորքոն կարեոր և հաշվի առնել յուրաքանչյուր խաղի սեփականությունն այս կամ այն տարիքի յերեխաների համար:

Խաղերի ընտրության ժամանակ հատուկ ուշագրություն պետք է դարձնել յուրաքանչյուր խաղի իդեոլոգիական հաղեցվածության վրա:

Զնայած յերեխաների և դեռահասակների համար նշանակված խաղերի մեջ առաջին պլանում ե զտնը-վում գործողությունը, այնուամենայնիվ դասառուն, մանրաղնին կերպով պետք ե քննի խաղերի բովանդակությունը և խաղից դուրս հանի այն բոլորը, վորը կարող ե վնասակար աղջեցություն թողնել յերեխաների վրա։ Անթույլատրելի յեն հին խաղերը, վորոնք արտացոլում են հին կենցաղը և սննահավատությունը, ինչպես նաև «քաղաքականացրած» խաղերը, վորոնք գուեհկացնում են քաղաքական կըրթությունը, այնպիսի խաղեր, վորոնք իրենց բովանդակությամբ և սյուժեյով դուրս են առանձին մասնկիցներին պրոլետարիատի նկատմամբ թշնամի վիճակում։ այնպիսի խաղեր, վորոնք պարտփողների նկատմամբ Փիզիկական պատիճ են նախատեսնում։ այնպիսի խաղեր, վորոնք ստորացնում են յերեխայի արժանապատվությունը։ խաղեր, վորոնք հակառանիստարական մոմենտներ են պարունակում։ այնպիսի խաղեր, վորոնք պահանջում են ներվամկանային մեծ լարվածություն։

Անհրաժեշտ ե հոգ տանել նաև խաղերի լավ ձեռվորման և անվանման վրա։

Դաստիարակական մեծ նշանակություն ունի խաղի ձիւտ կազմակերպումը։ Սրան են վերաբերում՝ տեղի պատրաստումը, խաղացողների բաշխումը և դասավորումը, կամանդաների համար պատասխանառու հանդիսացող զեկավացների նշանակությը։ կամ բնարությունը, ողնականների և դատավորների նշանակությը կամ ընտրությունը, ոժանդակ պարագանե-

րի բաշխումը, դործիքների դասավորումը, սահմաններ գծելը և այլն։ Այս բոլորը պետք է սկզբեց նախատեսնել և միանման հողատարարությամբ նախապատրաստել ինչպես փոքրերի, նույնպես և մեծահասակ դպրոցականների պարապմունքների համար— ինչպես շարժական խաղերի, նույնպես և սպորտային և ռազմականցրած խաղերի ժամանակ՝ միատեսակ կերպով։ Վորոշ գեղքերում ցանկալի յերեխաներին ևս մասնակից դարձնել խաղի համար տեղը (վայրը) նախապատրաստելու աշխատանքներին։

Խաղերը պետք ե տարվեն հիգիենիկ պայմաններում։ Ոնին գա գահիճում, հրավարակում, թե անտառի բացատում, միենույն և, այդ վայրերը պետք ե այդ տեսակետից լինեն վաղորոք նախապատրաստված։

Զպետք ե մոռանալ, վոր խաղն սկսողների համար փորչակի տեղ սահմանելը, խոչընդուների, արգելքների միջև յեղած տարածության չափումը, խաղացողների հավասար խմբերի բաժանելը, այսինքն՝ պայմանների միատեսակության պահպանումը, հատկապես կարևոր ե «աշխոների» հաշիվ ունեցող խաղերում։ Այս մոմենտների ստուգումը պետք ե հանձնարարել յերեխաներին։

Վորակեսղի հնարավոր լինի կամանդային խաղերում ապահովել ուժերի հետաքրքիր և լիարժեք մըրցակցությունը, շատ ավելի լավ է կամանդաների մեջ յերեխաների բաշխումը կատարել կամանդաների ու կավարների ընտրությամբ, քանի հասարակ բաժանումով։

Գործիքների ընտրության ժամանակ, Հատկապես  
ուազմաղործանական բնույթի վարժություններ ունե-  
ցող խաղերի մեջ, պետք է նախառեսել ինչպես զոր-  
ծիքների սարքին լինելը, այնպես և նրանց դասավո-  
րությունը, վարպետի փորեկ վասնդ չպատահի ա-  
շակերտների առողջությանը:

Յանկալի յէ, վորպետի խաղերի ժամանակ ըր-  
ուր աշակերտները, սկսած տարբական զպրոցի առա-  
ջին դասարանից, պարտադիր կերպով հերթով լինեն  
պատասխանատու գերերում. կամանդաների առաջ-  
նորդներ, կապիտաններ և դաստիպների ողնական-  
ներ: Սա կնպաստի նրանց մեջ նախոնեռնություն և  
ինքնուրույնություն մշակելու դործին: Ծնդամին դա-  
ստուն պետք է դիմերենցիալ կերպով մատենա յերե-  
խաներից յուրաքանչյուրին և իր պարտականությունը  
վոչ հաջող կատարողին ստիպի նորից մի անդամ ևս  
լինել պատասխանտու գերում: Սա նրան պատաս-  
խանառջություն կսովորեցնի, իսկ մյուսներին՝ ըն-  
կերոջն որյեկտիվ կերպով դնահատել: Այսպիսի ոգ-  
նականներից հետաղյում կարող են պատրաստել  
ինքնուրույն դաստիպներ:

Եարժական խաղերի անցկացման ժամանակ ան-  
հրաժեշտ և պահպանել խաղի բովանդակության հա-  
մառուտ և պարզ բացատրությունը, ըստ վորում այս  
բացատրությունը կլինի տարբեր տեսակի, նայա-  
ծամանակողների տարիքային առանձնահատկություն-  
ներին:

Ամենից լավ ե, վոր այդ բացատրությունը տրվի  
այնպես, վորպետի առաջին պլանի վրա գտնվի խաղի

եյությունը, չվործողությունների ողարգաբանությը,  
սպառ պետք և ընդդժվեն կանոնները և վերջում ցույց  
տրվի ժամանակցողների զասավորվածությունը:

1-ին և 4-րդ դասարաններում, բացատրությունը  
որետք և լինի պատկերավոր, զունազեղ— յերեմն  
զնորդությունները պարզաբանող, ըստվորում հիմ-  
նական կանոններն ընդդժվում են առանձին՝ բացա-  
տրության վերջում, վորպետի յերեխաներն այդ հի-  
մնի, առանձին կանոնների պահպանման, կիրառման  
վրա ուշադրություն և դարձվում խաղի ընթացքում:

Վոչ լրվի միջնակարգ և միջնակարգ դպրոցնե-  
րում, խաղի բացատրությունը պետք և լինի ավե-  
լի հակերծ, առանց ավելորդ ժամնրամասնության,  
առանց խաղի տակարկան հուշելու, բայց խաղացող-  
ների միջև գերեւի հատուկ բաժանմամբ:

Խաղի ընթացքում հնարակութ և կատարել ընդմի-  
ջություններ և տալ լրացուցիչ ցուցումներ կատարած  
ուեխնիկական և այլ սխալների ուղղման համար.  
Խաղը կարելի յէ ընդհատել միայն կանոնների և  
դիսցիպլինայի մեջ խախտումների ժամանակ:

Բացատրություններ տալու ժամանակ յերեխանե-  
րը պետք է կանոնած լինեն այնպես, վոր այդ հար-  
մար լինի ինչպես աշակերտների, նույնպես և դա-  
ստիպի համար: Ավելի լով և, վոր յերեխաները կանո-  
նած լինեն մեկ կամ յերկու կիսաշրջանաձև, մեկ կամ  
յերկու շրջանաձև, կամ յերկու շարք—յերես առ յե-  
րես: Մասնակիցների զասավորումը մեծ մատուր  
կատարվում է խաղը պարզաբանելուց հետո:

Այսպիսի շարադասումները (բացատրություններ

տալու համար) հնարավոր և անցկացնել տարբեր ձեռվով, ինչպես որինակ՝ ա) հավաքել՝ կազմակերպված կոլեկտիվը շրջանցման ձեռվ, նախորոք դրա համար տված հատուկ հրամանով կամ համբանքով, նույն ձեռվ ել ցրել՝ տալով պարզուոչ հրաման, բ) աղատ կերպով՝ ըստ առաջադրանքի հավաքվելու ձեռվ, գ). ըստ հրամանի կամ աղջանշանի տեղերը արագ գրավելու ձեռվ, դ) կամանդաների զեկալաբների հրամանատարությամբ կազմակերպված տեղաշարժման ձեռվ, ցանկալի յե ոգտագործել հիշատակված՝ շարադասումների բոլոր ձեերն ել: Արանց կերպումը կախված կլինի մասնակցողների տարիքային առանձնահատկություններից, խաղի տվյալ բողոքին խաղաղողների վիճակից և խաղի մասնակցողների դասավորվածության բարդությունից:

Տարրական դպրոցում ավելի հաճախ կարելի յէ կիրառել շարադասումների առաջին յերկու ձեերը, միջնակարգ դպրոցի աշակերտների համար՝ վերջին յերկու ձեերը:

Տարրական դպրոցում այնպիսի խաղեր անցկացնելու ժամանակ, ինչպես որինակ՝ «Գնդակը շրջանում», «Դատարկ տեղ» և այլն, նպատակահարժուրե աշակերտներին դասարանում բաժանել 2—3 խմբակի և յուրաքանչյուր խմբակի համար կազմակերպել առանձին խաղ: Բարձր տարիքի յերեխաների համար խաղերի նման կազմակերպումը կարելի յե ողագործել աշակերտներին ըստ ուժերի վերադասավորելու համար:

Երեխաների հետ խաղերն անցկացնելիս՝ տըմբ-

լիք հրամաններն ու ազդանշանները նույնպես կարող են լինել տարբեր տեսակի: Հակիրճ բառային հրամաններն են. «վազի՛ր», «մա՛րչ», «սկակի՛ր» «հո՛պ», աղջանշանները՝ ծափ, ակորդ, հարված թմբուկին, հարված փայտով հատակին, դանդակ, սուլել, լուսավոր աղդանշան, գունալոր փոքր դրոշակ, բառային հրամաններ, վորոնք պահանջում են սպասողական վիճակ — «մեկ—յերկու—յերեք», «ուշաղրությունմարչ», «պատրաստվելու ուշաղրությունմարչ»: Փոքրահասակ յերեխաների հետ կազմակերպված խաղերի ժամանակ, սկզբնական շրջանում դիմավորապես տրվում են կարճ հրամաններ և աղդանշաններ: Սուտիչը, վորպես ավելի սուր աղդանշան, ավելի լավ է կիրառել մեծահասակների համար: Միջնակարգ դպրոցում ողագործվում են բոլոր տեսակի հրամանները: Սպասողական վիճակ (վայերյա) պահանջող հրամանները գործադրվում են յերեմն վորոշ տեսակի թիմային խաղեր անցկացնելիս: Խաղի ընթացքում անհրաժեշտաբար պահանջվող ժամանակավոր ընդմիջումների համար, հատկապես թիմային ընդմիջումների համար, հատկապես թիմային սպորտային խաղերում, համարյա միջտ դործադրվում և սուլիչը:

Կանոնները խաղի մեջ ունեն բացառիկ դաստիարակական նշանակություն, դրա համար ել ուսուցիչը, վոր նախորոք համոզված է խաղի այս կամ այն կանոնի նպատակահարմարության մեջ, պետք է տարրական դպրոցի առաջին խոկ դասարանից սկսած տպահովի այդ կանոնների անդաման կատարումը և

անուշաղըության չմատնի այդ կանաներից վորեկ մեկի, անդամ ամենապիշեթե խախումը:

Խաղի ընթացքում զատառուն չպետք է թույլ տա վորեկ կամայականություն խաղացողների զործունեցության մեջ, իսկ իր կողմից պետք է ցույց տա զատառության լավագույն որբնակ: Հատուկ ուշադրություն պետք է զարձնել այն բանի վրա, վոր խաղի ժամանակի կոպառություններ չլինեն (հատկապես մրցակցության բնույթ ունեցող խաղերի ժամանակ), ուղղ ու տեղն արմատախիլ անել այդպիսի փորձերը, վորի համար և հարկավոր և՝ վորոց սահմանափակումներ կիրառել կանոնները խախուղների նկատմամբ, խաղից ժամանակավարպես հետացնել և այլ միջոցառումներ:

Խաղի զողիբովիկան (չափի վորոշումը) չառ պատասխանառու մոմենտ և զատառվի համար: Գետք և տաել, վոր խաղի մեջ բեռնվածության զողիբովիկան չառ ավելի դժվար և, քան մարմամարզության ժամանակ: Այստեղ բացի Փիզիկական վարժություններից մեծ դեր են խաղում նաև եմոցիաները՝ կապված մրցակցության, խոչընդուների հաղթահարման և հաղթանակը տանելու ինդիբների հետ: Այս հանդամոնքները ուսարաւորում են չառ ավելի ուշագիր վերաբերմունք հանդիս րերել զետի խաղի ընթացքը, և դեպի ուղիելով զատառվարությունը:

Խաղի մեջ բեռնվածության վորոշուն համար անհրաժեշտ և հաշվի առնել հրապարակի չափերը, խաղի մեջ մտնող վարժությունների բնույթը, խաղի

կրկնման քանակը, խաղացողների արամագությունը և խաղի տեսզությունը:

Ենթավածության իջեցման համար կարելի յերնդմիջում—հանդիսա տալ հետեւյալ ձեռվ. աղաս քայլել, սիստիմերի վերըուծում կատարել, հաշվել, թե քանի անդամ ով և տարվել, ով տարել և այլն: Բառ ժամանակի՝ տարրական զարոցում խաղը կարող է տեսել 10-25 բռպի, միջնակարգ զարոցում՝ 15-40 բռպե:

Կարեռ և վորսալ այն բռպեն, թե յե՞րբ և ավելի նպատակահարմար վերջացնել խաղը: Ծանօթ խաղերի ժամանակ լավ և վերջացնել խաղն այն ժամանակի, յերբ խաղից ստացվել ե ամենամեծ բավականությունը, այլ խառնվ առած խաղի ամենայեսուն ժամանակի:

Սպորտային խաղերի ժամանակ ուետք և հատկապես ուշագիր լինել զողիբովիկան (ծանրաբենմածություն) վորոշելիս, զրա համար ել պետք և խիստ կերպով սահմանել յերեխաների համար սահմանված՝ հրապարակի չափերը, դնետիկի ծանրությունը, խաղի սահմանված տեսզությունը, և ամբողջ ժամանակ հետեւել ու հաշվի նետել խաղի ինտենսիվությունը: Յերեւածի ահճրաժեշտ և իջեցնել խաղացողների կողմից բերմն ահճրաժեշտ և հաղթանակը կազմությարած խաղի տեսզությունը կամ մոցնել ալելի համար խաղի ընդմիջումներ:

Խաղմականացրած խաղեր կազմակերպելիս՝ կարելուր և հաշվի առնել վայլը (տեղը), տարվա յեղանակը, բարեխառնությունը, խաղացողների հաղուս-

տը, իմադի մեջ մտնող վարժությունների բնույթը  
և խաղի տեղողությունը:

Մանկավարժական տեսակետից շատ կարևոր է,  
վոր խաղը հասցրվի մինչև իր վախճանը, վորպեսզի  
խաղացողներն այդ դգան և բավականություն ստա-  
նան: Միայն բացառիկ զետքերում կարելի յէ տվյալ  
խաղը հանել, առանց այն ավարտելու, որինակ, յերբ  
դասատուն տվել ե մի խաղ, վորտեղ պահանջվում է  
բացարձակ լուսություն («ճանաչիր ձայնից»), իսկ ա-  
շակերտներն այնպես են արամադրված, վոր չեն կա-  
րող ապահովել սպահանջված լուսությունը:

Յուրաքանչյուր թիմային խաղի վերջում պար-  
տադիր ե հայտարարել արդյունքները, մատնանշելով  
այս կամ այն կամանդայի կողմից թույլ տված սիալ-  
ները:

Միջնակարգ դպրոցում շատ կարևոր է սպորտա-  
յին խաղից հետո անցկացնել արդյունքների հաշվա-  
ռում, հենց մասնակցողների կողմից քննարկության  
առնելով խաղի տեխնիկայում և տակտիկայում թույլ  
տված սխալները: Սա ունի դաստիարակչական խո-  
չոր նշանակություն:

Թարգմանող՝ Ա. Գասպարյան  
Խմբագիր՝ Հ. Փարսադամյան  
Տեխ. Խմբագիր և  
սրբազրիչ՝ Ար. Հայովերդյան



ՀՀ Ազգային գրադարան



NL0216066

9162 50 4.

45. 495

9620

Игры и их значение  
в школьном педагогическом  
процессе  
Просвещдат 1940